ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԿՈՄՈՒՄ

Մոտ օրերս Մոսկվայում տեղի կունենա ազգամիջյան հարաբերություններին նվիրված գիտական խորհրդակցություն: Նախապատրաստվում է ազգային հարցին նվիրված կուսակցության Կենտկոմի պլենումը: Խորհրդակցությանը կմասնակցեն ու ինֆորմացիա յով հանդես կգան ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատներ, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Գ. Ա. Գալոյանն ու ԼՂԻՄ հատուկ կառավարման կոմիտեի նախագահ Ա. Ի. Վոլսկին: Հունիսի 30-ին ընկ. Գ. Գալոյանը ժամանեց Ստեփանակերտ, մոտիկից ծանոթանալու մարզում տիրող իրավիճակին, շփվելու մարդկանց հետ, իմանալու նրանց մտքերը: Կուսակցական ղեկավար աշխատողների հետ յուրաքանչյուր հանդիպում մարզկենտրոնում մեծ հետաքրքրություն է առաջացնում: Ներկա դեպքում ևս: Կուսակցության քաղկոմում հավաքվել էին աշխատավորական բոլոր կոլեկտիվների, բնակչության տարբեր խավերի ներկայացուցիչներ:

Նշարդային, խիստ լարված էր դահլիճը: Երևում է, անհետ չեն անցել մոտ երկու ամիս ձգվող գործադուլները, խորհուրդների համագումարի հաջումաշ անող օրերը, հունիսի 29-ը... Դահլիճը սպասման, կամքի, հավատի տասնապատկված ուժով (անհավատալի կենսունակ է մեր ժողովուրդը իր գաղափար-պահանջով) փորձում էր պարզել, թե ինչ առաքելություն ունի ՀԿԿ Կենտկոմի քարտուղարը, ինչ պիտի ասի նա մոսկովյան խորհրդակցությունում: Հարցնում էին կարծիքը. կլուծվի՞ ղարաբաղյան պրոբլեմը, դիցուք, այն չվճռվեց Լեռնային Ղարաբաղի ուզած ձևով, ի՞նչ դիրք կբռնեն Հայաստանի կառավարությունը, կուսակցական կազմակերպությունը, ի՞նչ ծրագրեր ունեն...

Գ. Գալոյանը երախտիքի ջերմ խոսքեր ասաց ղարաբաղցիների հասցեին, ժողովրդական շարժման մեջ ցուցաբերած անկոտրում կամքի, խոհեմության, ազգային շահերին նվիրվածության համար: Նշեց, որ Հայաստանում բավականին բարեփոխվել են ժողովուրդ-կուսակցություն, ժողովուրդ-կառավարություն հարաբերությունները՝ որպես վերակառուցման, դեմոկրատիայի, դրանց ծնունդ ղարաբաղյան շարժման անմիջական արգասիք: Մի անգամ չկրկնեց. Լեռնային Ղարաբաղի պրոբլեմը համաժողովրդական մտահոգության առարկա է, հարկավոր է պահպանել մեկուկես տարվա զգաստ, արժանապատիվ կեցվածքը, ինքնատիրապետումն ու տոկունությունը, չընկնել ծայրահեղությունների մեջ: Ծարծումը նոր փուլ է մտել, նոր ուղիներ, միջոցներ պիտի որոնել և միշտ հիշել, որ այսօր հայ ժողովրդի ազգային կարևորագույն, առաջնահերթ խնդիրը ապօրինաբար Հայաստանի կազմից խլված Արցախի պրոբլեմի լուծումն է՝ ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի հիման վրա, «կլոր սեղանի» շուրջ, խաղաղ երկխոսության շրջանակներում: Իսկ դրան կարելի է հասնել մեր պետության դեմոկրատական հիմքերի կատարելագործման միջոցով:

Առաջին անգամն է Հայկական ԽՍՀ գաղափարախոսության բնագավառի ղեկավար աշխատողը լինում Լեռնային Ղարաբաղում: Դրանով պիտի բացատրել քանիցս արծարծված հարցերի առատությունը: Մարդիկ ուզում էին լսել նրա պատասխանը, նրա կարծիքը: Ինչ-որ տեղ կար նաև վիրավորվածության, անվստահության մոմենտը. ինչ օգուտ այս հանդիպումից, իսկ ինչ կա այցի ետևում: Կասկածամտությունը հատուկ չէ ղարաբաղցիներիս, այդ գիծը ձեռք է բերվել վերջին մեկուկես տարում: Ուղղակի ցավ ես զգում՝ լսելով նրանց. «Ո՞ւմ է պետք է՞ իրենց կուլտուրականությունը», «Հերիք չէ՞ բարձր բարոյական դիրքերից խոսենք, գուցե շահենք՝ մեզ պահելով հարևանների պես»... Թերահավատորեն են տրամադրված դեպի նոր հանձնախումբը, որի խնդիրն է ուսումնասիրել և զեկուցել իրավիճակի մասին... Ինչո՞ւ այդքան անորոշ, ինչո՞ւ հայ դեպուտատները համաձայնվել են նման ձևակերպմանը: Նո՞ր պիտի ճշմարտությունը բացահայտվի, ինչքա՞ն կարելի է ուսումնասիրել միևնույն հարցը:

«Մենք այնքան լավ զգացինք մեզ, որ Լեռնային Ղարաբաղի պրոբլեմը ուշադրության առնվեց համագումարում»: Այս պատասխանը, բնականաբար, չգոհացրեց ներկաներին: Ա. Վոսսի հանձնախմբի աշխատանքի հետևանքը ԼՂԻՄ հատուկ կառավարման կոմիտեի ստեղծումն էր, կուսակցության մարզկոմի և մարզխորհրդի գործկոմի աշխատանքի դադարեցումը: Ի՞նչ երաշխիք կա, որ վաղը ավելի լավ որոշում կկայացվի և արդյո՞ք, սա վերջին հանձնախումբը կլինի... Հոգնել են տարուբերումներից:

—Ինձ թվում է, հանձնախմբի ստեղծումը պայմանավորված է չսխալվելու մտահոգությամբ: ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը, ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոն պիտի կարողանան համոզել երկրին Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի արդարացիության և այն լուծելու անհրաժեշտության մեջ,— ասաց Գ. Գալոյանը:

Մարդիկ չթաքցրին իրենց դժգոհությունը Հայաստանի ղեկավարությունից: Ինչպես 68 տարի, ինչպես 1,5 տարի առաջ, նա շարունակում է հեռու մնալ Ղարաբաղից, զգուշանում խառնվել նրա ներքին գործերին: Մի պահ չսարսափեցնող անկեղծացավ դահլիճը. ոչ մի դժվարություն չի կրելու իրենց, բայց անավոր խեղճանում են, որ վերականգնողական աշխատանքները երկրաշարժի գոտում ձգձգվում են, որ քաղաքական կյանքում հակասություններ շատ կան, բազմաթիվ հասնատված, ոչ ֆորմալ կազմակերպություններ, որ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանում սուր վեճեր են ծագում, թվում է, թե պարզ ու հեշտ լուծելի խնդրի շուրջ: Իրենց ուժեղ ու միասնական Հայաստան է պետք, վճռական՝ գործողություններում:

Վերջին մեկուկես տարում ամենատարբեր ինստանցիաների ներկայացուցիչների հետ բազմաթիվ հանդիպումներ են կայացել Ստեփանակերտում: Ցավոք, դրանք միշտ չեն կոնկրետ, էական որևէ բան տվել: Ինչ տվեց հունիսի 30-ի հանդիպումը այդ տեսակետից: Այն նշանակալից էր նրանով, որ կարծես թե փոխըմբռնում կայացավ: Ուշքներնք Գ. Գալոյանի խոսքը. «Ես հասկացա, որ դուք մեզ վճռական չեք համարում, որ դուք վճռական զորություններ եք պահանջում ու ապասում: Ես հասկացա, որ դուք լուրջ դիալոգի կարիք ունեք, որ մեր կապերը պիտի ամրապնդել: Կաշխատեմ նորից հանդիպել, կիսվել ձեզ հետ: Թե երբ, չգիտեմ, ամեն ինչ կախված է նրանից, կհաջողվի՞ սերտ կոնտակտների մեջ մտնել նոր հանձնախմբի հետ, թե ոչ»:

Նորից Ստեփանակերտը, մարզը սպասման մեջ են: Առջևում գիտական խորհրդակցությունն է, Ազգությունների խորհրդի հանձնախմբի աշխատանքը մարզում, ԽՄԿԿ Կենտկոմի ազգամիջյան հարաբերություններին նվիրված պլենումը: Ի՞նչ կտան դրանք...

ԼՅՈՒԴՄԻԼԱ ՖԱՐՍՅԱՆ